ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՄԴԿ-23/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
10	«Անձնվիրություն և անվեհերություն» մեդալն իրենից ներկայացնում է 40 մմ երկարությամբ դեպի եզրերը լայնացող հավասարակողմ էմալապատ կապույտ խաչ, որի թևերի լայնությունը նվազագույնը 10 մմ է, իսկ առավելագույնը՝ 13 մմ: Մեդալը պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածից: Մեդալի հիմնական գույնն արծաթագույնն է: Խաչը եզրազարդված է 1 մմ լայնությամբ և 1 մմ բարձրությամբ արծաթագույն շրջանակով: Խաչի կենտրոնում տեղակայված է 30 մմ տրամագծով շրջան, որի տակից՝ խաչի թևերի հատման անկյունագծով աստիճանական կարգով տեղակայված են 7-ական արծաթագույն շողեր՝ 3-6 մմ երկարությամբ: Շրջանի կենտրոնում տեղակայված է Կոմիտեի ռելիեֆային արծաթագույն խորհրդանիշը՝ 23 մմ տրամագծով, եզերված է Հայաստանի Հանրապետության եռագույնը խորհրդանշող կարմիր, կապույտ, նարնջագույն էմալներով: Խորհրդանիշի վերևում գրված են «ԱՆՁՆՎԻՐՈՒԹՅՈՒՆ», իսկ ներքևում՝ «ԱՆՎԵՀԵՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: Մեդալի դարձերեսին՝ ներքևի հատվածում տեղակայված է մեդալի հերթական համարը: Մեդալն ունի թեթև մետաղից պատրաստված հնգանիստ կախիչ՝ 39x27x39x24x24 չափերի, որը երեսպատված է 24 մմ լայնություն ունեցող մետաքսե մուգ կապույտ ժապավենով: Ժապավենի կենտրոնով անցնում է՝ 4 մմ լայնությամբ ոսկեգույն զոլակ, որի երկու կողքով՝ 3 մմ լայնությամբ մոխրագույն զոլակներ: Կախիչի դարձերեսին առկա է պտուտակային ամրակ՝ հագուստին ամրացնելու համար:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՄԴԿ-23/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
10	